


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի հունվարին


(վերլուծություն)

2015 թվականի հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 8991 գործարք, որոնց քանակը 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 53.5 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 10.7 %-ով:

2015 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2113 օտարման գործարքների 72.9 %-ը կազմել է առուվաճառքը, 26.4 %-ը՝ նվիրատվությունը և 0.7 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 31.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի հունվարին, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 60.1 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 26.6 %-ով:

2015 թվականի հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի հունվարին, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 67.5 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 50.9 %-ով:

2015 թվականի հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունվար 2014 թ.	հունվար 2015 թ.	դեկտեմբեր 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282600	282700
Նոր Նորք	252000	252800	252900
Ավան	260000	260150	260200
Էրեբունի	250500	251100	251150
Շենգավիթ	256000	256750	256850
Դավթաշեն	275150	275100	275200
Աջափնյակ	249300	249500	249600
Մալաթիա-Սեբաստիա	242000	242400	242500
Նուբարաշեն	154750	156200	156200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել են 0.04%-ով:

2015 թվականի հունվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 164 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 62.9 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 46.2 %-ով:

2015 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունվար 2014 թ.	հունվար 2015 թ.	դեկտեմբեր 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	115300	116000	116000
	Ապարան	57250	57500	57550
	Թալին	64900	65850	65950
Արարատ	Արտաշատ	95300	97100	97150
	Մասիս	115000	115800	115850
	Վեդի	100000	100700	100750
Արմավիր	Արարատ	75300	75500	75600
	Վաղարշապատ	154150	154100	154150
	Արմավիր	121200	121200	121200
Գեղարքունիք	Մեծամոր	87500	87500	87500
	Սևան	99200	99200	99200
	Գավառ	59800	59850	59850
	Մարտունի	107650	107700	107750
	Վարդենիս	44800	44800	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88600
	Ստեփանավան	74500	74600	74600
	Սպիտակ	99800	99800	99850
	Ալավերդի	55000	55100	55150
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
Կոտայք	Աբովյան	155100	155000	155100
	Նոր Հաճն	128600	128550	128600
	Բյուրեղավան	108150	108100	108150
	Եղվարդ	109300	109350	109400
	Հրազդան	63800	63800	63850
	Ծաղկաձոր	292500	292400	292500
	Չարենցավան	85500	85500	85550
Շիրակ	Գյումրի	109300	109200	109300
	Արթիկ	66500	66700	66750
	Մարալիկ	40700	40700	40700
Սյունիք	Գորիս	121800	122500	122600
	Կապան	92250	93150	93250
	Սիսիան	91150	91300	91350
	Մեղրի	80800	81000	81050
	Ագարակ	46850	46900	46950
	Քաջարան	94650	94600	94700
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	94900	95000
	Եղեգնաձոր	124850	125500	125550
	Ջերմուկ	112500	112900	112950
Տավուշ	Դիլիջան	113150	113700	113800
	Իջևան	118300	118200	118300
	Բերդ	60200	60200	60250
	Նոյեմբերյան	49900	49850	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել են 0.1%-ով:

2015 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 206 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 55 գործարք, մարզերում՝ 151 գործարք: 2015 թվականի հունվարին, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 62.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ 64.7 %-ով, իսկ մարզերում՝ 61.7 %-ով: 2015 թվականի հունվարին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 34.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ 14.1 %-ով, իսկ մարզերում՝ 40.1 %-ով:

2015 թվականի հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունվար 2014 թ.	հունվար 2015 թ.	դեկտեմբեր 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի հունվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունվար 2014 թ.	հունվար 2015 թ.	դեկտեմբեր 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Զարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի հունվարին հանրապետությունում օտարվել է 864 միավոր (681.65 հա) հող, որից Երևանում՝ 43 միավոր (4.17 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 550 միավոր (650.80 հա), որից Երևանում՝ 11 միավոր (1.52 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 215 միավոր (18.69 հա), որից Երևանում՝ 15 միավոր (0.73 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 71 միավոր (6.34 հա), որից Երևանում՝ 16 միավոր (0.99 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 10 միավոր (2.45 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.93 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 2 միավոր (2.87 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 16 միավոր (0.50 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի հունվարին հանրապետությունում օտարված հողերից 689 միավորի (633.68 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 34 միավոր (2.93 հա), նվիրատվության գործարքներ՝ 173 միավորի (47.20 հա), որից Երևանում՝ 9 միավոր (1.24 հա) և փոխանակության գործարքներ՝ 2 միավորի (0.76 հա):

Հանրապետությունում 2015 թվականի հունվարին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.3 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 32.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 32.0 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 18.2 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 133.43 հա, որից 126.86 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 18.3 %-ը կամ 126 միավորը (403.82 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 7 միավոր (0.14 հա), իսկ 80.6 %-ը կամ 555 միավորը (229.44 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 26 միավոր (2.79 հա): 2015 թվականի հունվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 8 գործարք (0.42 հա):

Ստորև ներկայացվում է 2015 թվականի հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	1	0.01	6	0.14	4	0.59	1	0.93	12	0.41	9	0.86
Արագածոտն	3	1.72	3	0.19	0	0.00	2	0.07	28	16.61	0	0.00	12	1.28	0	0.00
Արարատ	5	22.76	3	0.74	2	0.01	5	0.05	79	39.53	0	0.00	40	3.67	3	0.01
Արմավիր	26	369.46	0	0.00	0	0.00	1	0.07	60	35.47	0	0.00	21	2.06	6	0.34
Գեղարքունիք	3	0.40	0	0.00	2	0.13	3	0.05	84	39.25	0	0.00	17	1.90	1	0.04
Լոռի	2	1.24	0	0.00	13	0.21	3	0.17	14	10.29	0	0.00	3	0.28	1	0.01
Կոտայք	4	1.97	0	0.00	7	0.41	4	0.03	41	27.56	0	0.00	24	1.87	7	3.39
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.001	0	0.00	14	13.67	0	0.00	5	0.35	3	0.02
Սյունիք	0	0.00	1	0.12	0	0.00	0	0.00	46	25.44	0	0.00	2	0.22	1	0.01
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.03	5	1.13	0	0.00	1	0.25	1	0.004
Տավուշ	1	0.40	0	0.00	4	0.21	3	0.13	5	0.91	0	0.00	2	0.21	3	0.88
Ընդամենը	44	397.95	7	1.05	30	0.98	28	0.74	380	210.45	1	0.93	139	12.50	35	5.56

Ստորև ներկայացված է 2015 թվականի հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	3	0.06	0	0.00	1	0.01	2	0.05	4	0.09	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.09
Արագածոտն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	7	1.98	3	1.72	3	0.19	0	0.00	1	0.07
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.82	3	1.02	3	0.74	2	0.01	5	0.05
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	27	369.53	26	369.46	0	0.00	0	0.00	1	0.07
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	0.58	3	0.40	0	0.00	2	0.13	3	0.05
Լոռի	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	17	1.61	2	1.24	0	0.00	12	0.20	3	0.17
Կոտայք	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	14	2.40	4	1.97	0	0.00	6	0.40	4	0.03
Շիրակ	1	0.001	0	0.00	1	0.001	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.12	0	0.00	1	0.12	0	0.00	0	0.00
Վայոց ձոր	1	0.03	0	0.00	0	0.00	1	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	2	0.033	0	0.00	1	0.03	1	0.003	6	0.71	1	0.40	0	0.00	3	0.19	2	0.12
Ընդամենը	10	0.15	0	0.00	5	0.06	5	0.09	97	378.84	42	376.21	7	1.05	25	0.93	23	0.65

2015 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք (21.74 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի հունվարին, 2014 թվականի հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 6.7 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 63.6 %-ով, իսկ մարզերում՝ մնացել է անփոփոխ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 31.3 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 26.5 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 34.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 75.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						15	3.88	365.0	12000.0	3694.4
Ապարան	2	0.21	1055.1	1157.7	1106.4	2	2.30	86.5	2727.3	655.3
Թալին						8	6.44	93.6	5494.5	758.3
Ծաղկահովիտ	1	1.51	191.3	191.3	191.3	3	4.00	79.5	1000.0	332.5
Արարատի մարզ										
Արտաշատ						37	9.08	335.1	10833.3	2566.0
Մապիս	1	0.11	6002.2	6002.2	6002.2	10	6.17	200.0	11904.8	3030.5
Վեդի	2	0.91	233.3	304.1	268.7	31	23.90	207.0	10795.1	1822.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	12.52	63.2	72.9	65.7	30	17.60	294.3	9090.0	1212.3
Բաղրամյան	22	356.94	73.5	384.0	158.0	7	7.27	90.6	2561.1	860.0
Վաղարշապատ						22	8.34	444.4	11764.7	1935.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						81	29.17	199.8	1875.0	445.0
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի	3	0.40	130.0	142.4	134.2			51.1	2850.0	782.3
Սևան								52.2	2134.8	328.5
Վարդենիս						3	10.08	41.2	2575.1	425.3
Լոռու մարզ										
Ալավերդի						8	4.33	170.4	6424.2	600.0
Գուգարք						1	0.13	234.6	6065.9	796.5
Սպիտակ								250.0	5555.5	705.5
Ստեփանավան	2	1.24	932.5	932.8	932.7	3	1.82	90.6	1686.6	365.5
Տաշիր						2	4.00	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	1.92	282.5	2463.5	1452.0	14	2.31	279.3	11942.7	4035.0
Եղվարդ						22	23.11	174.4	11971.8	2370.1
Հրազդան	1	0.05	577.8	577.8	577.8	5	2.14	130.5	10256.4	1225.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	6.03	252.0	1693.1	615.0
Ամասիա								40.9	261.0	130.0
Անի						2	3.37	110.6	546.9	441.5
Աշոցք								58.5	215.8	135.2
Արթիկ						4	4.27	79.4	1428.6	480.0

Սյունիքի մարզ										
Գորիս						10	8.05	92.6	1023.2	776.5
Կապան						2	2.80	120.0	841.6	395.0
Մեղրի								193.0	3000.0	750.5
Սիսիան						34	14.59	46.3	1977.4	572.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	1.13	125.0	10000.0	1850.0
Վայք								58.8	1430.7	632.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.13	213.3	3783.8	685.0
Իջևան						2	0.30	267.5	9454.5	1330.0
Նոյեմբերյան	1	0.40	166.8	166.8	166.8	2	0.48	46.7	7368.4	955.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի հունվարին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						8	8315.0	130.7	22200.0	2586.5
Ապարան						1	290.0	124.1	609.6	391.1
Թալին						3	4241.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ						11	12912.5	173.9	7140.3	905.8
Մասիս	2	94.4	3148.6	3606.7	3377.6	20	16065.6	187.5	25000.0	1213.5
Վեդի						8	6680.0	126.1	5000.0	664.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	10395.6	131.6	9090.9	1213.6
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						10	8965.0	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	7675.9	186.6	1084.3	684.3
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	2	1338.0	165.1	165.2	165.1	6	7188.0	119.3	5000.0	285.5
Սևան						1	99.5	240.0	3110.4	330.0
Վարդենիս						3	4082.0	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	11	929.3	244.2	1650.4	1114.9	2	1720.0	114.3	1388.9	217.4
Գուգարք								77.9	14083.3	1260.4
Սպիտակ	1	1039.0	244.6	244.6	244.6			104.9	1348.3	207.6
Ստեփանավան						1	1100.0	88.2	1666.7	175.7
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	3187.8	1543.5	5200.0	3344.3	9	6845.0	264.5	35353.5	2000.0
Եղվարդ	1	800.0	2985.8	2985.8	2985.8	12	9505.0	173.6	27000.0	2868.4
Հրազդան						3	2350.0	117.7	34848.5	1321.7

Շիրակի մարզ										
Ախուրյան						3	3261.2	113.6	18750.0	336.3
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	193.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						2	219.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1110.0	112.2	1700.0	365.3
Կապան								67.9	2638.9	341.0
Մեղրի								68.5	632.9	237.5
Սիսիան								123.5	875.0	228.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	2490.0	96.7	7659.6	511.0
Վայք								120.7	1448.3	242.5
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	125.3
Իջևան	3	1883.6	3000.0	3000.0	3000.0	1	800.0	74.1	14423.1	545.5
Նոյեմբերյան						1	1320.0	125.0	1948.1	243.5

2015 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 268 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.0 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 74.3 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2015 թվականի հունվարին, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 69.4 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 44.3 %-ով:

2015 թվականի հունվարին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 39 բնակարանի, 24 անհատական բնակելի տան, 120 հասարակական, 28 արտադրական նշանակության օբյեկտի, 52 հողի և 5 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 2 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ աճել 2.0 անգամ: 2015 թվականի հունվարին հանրապետությունում վարձակալված 184.88 հա հողերից 0.02 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 184.86 հա հողերից 149.61 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 11.36 հա արդյունաբերական օբյեկտների, 0.40 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 88.76 հա, որից 85.54 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 408 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 4.5 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 84.7 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 59.5 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.2 %), անհատական բնակելի տների (21.8 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.3 %) և հողերի (11.5 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 250 գրավադրման

գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 83.5 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 50.5 %-ով:

2015 թվականի հունվարին հանրապետությունում գրավադրվել է 54.07 հա հող, որից 9.68 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 80.2 %-ը կամ 43.37 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 37.88 հա, որից 37.33 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի հունվարին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 24 գործարք: 2015 թվականի հունվարին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 86.8 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել է 65.7 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 20 գործարք, որը 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 82.3 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 44.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 94.2 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 88.2 %-ով:

2015 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 754 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 67.2 %-ով, իսկ 2014 թվականի հունվարի համեմատ՝ 22.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 8.4 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում (20.7 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե